

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2017թվականի հունվարի 13-ի

N -06-Ն հրամանի

ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ
ՔԱՂԱՔԱՑՈՒ՝ ՀԱՅԵՐԵՆԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻՆ
ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգով կարգավորվում են որպես Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու առաջադրվող քաղաքացու (այսուհետ՝ քաղաքացի)՝ հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում՝ հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգման հետ կապված հարաբերությունները:
2. Որպես Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու առաջադրվող քաղաքացու՝ հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգումն (այսուհետ՝ ստուգում) իրականացվում է թեստավորման միջոցով, որի արդյունքում տրվում է տեղեկանք հայերենին տիրապետելու մասին (այսուհետ՝ տեղեկանք):
3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) մշակում է թեստավորման համար առաջադրանքների հարցաշար, որը, ինչպես նաև գրականության ցանկը կամ հղումները, Ազգային ժողովի ընտրության օրվանից առնվազն երկու ամիս առաջ պարտադիր կարգով տեղադրվում է նախարարության պաշտոնական կայքէջում: Հարցաշարի հետ միաժամանակ կայքէջում տեղադրվում է նաև առաջադրանքների կազմման աղբյուրը:
4. Հարցաշարի բովանդակային բաղադրիչները ներառում են հայոց լեզվի քերականության մի քանի բաժիններ՝ հետևյալ հարաբերակցությամբ՝

1) «Ուղղագրություն» - 35%.

2) «Ուղղախոսություն» - 35%.

3) «Բառագիտություն» - 30%:

5. Տեղեկանք ստանալու համար քաղաքացին դիմում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ և դրա պատճենը, ինչպես նաև նշում է այն էլեկտրոնային հասցեն կամ հեռախոսահամարը, որով կարող է տեղեկացվել թեստավորման անցկացման վայրի և ժամի մասին:
6. Դիմումը նախարարությունում մուտքագրվելուց հետո երկրորդ աշխատանքային օրը՝ նախարարի հրամանով ձևավորվում է հանձնաժողով, որը կազմված է առնվազն 3 անդամից: Մեկ անգամ դիմում ներկայացնելը չի սահմանափակում քաղաքացու՝ կրկին անգամ դիմելու հնարավորությունը:
7. Քաղաքացին թեստավորման անցկացման վայրի և ժամի մասին է լրացուցիչ տեղեկացվում է:
8. Թեստավորումն անցկացվում է գրավոր՝ այդ նպատակի համար առանձնացված սենյակում, որն ապահովված է համապատասխան պայմաններով: Անհրաժեշտության դեպքում սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող քաղաքացիների համար ստեղծվում են լրացուցիչ պայմաններ:
9. Քաղաքացին թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Հանձնաժողովը ստուգում է նրա ինքնությունը և թույլատրում է նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ:
10. Թեստավորման ընթացքում քաղաքացուն արգելվում է սենյակ բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր, թեստավորման առաջադրանքների կատարման համար աղբյուր հանդիսացող այլ միջոցներ:
11. Քաղաքացու ներկայությամբ Հանձնաժողովի անդամներից մեկը համակարգչի միջոցով ձևավորում է թեստ և այն ամփոփաթերթի հետ տրամադրում քաղաքացուն:
12. Թեստը բաղկացած է սույն կարգի 4-րդ կետով սահմանված համամասնությամբ պատահականության սկզբունքով ընտրված 30 առաջադրանքից և դրանց երեք կամ չորս ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է:

13. Քաղաքացին ամփոփաթերթում լրացնում է իր անունը, ազգանունը: Այնուհետև հանձնաժողովի անդամներից մեկը կտրում է ամփոփաթերթի անձնական տվյալները պարունակող մասերը, ստուգում դրանց ճիշտ լրացված լինելը:
14. Թեստը բաղկացած է առաջադրանքներից և դրանց երեք կամ չորս ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է:
15. Թեստավորման առաջադրանքները քաղաքացուն տրամադրելուց հետո հայտարարվում է թեստավորման սկիզբը: Առաջադրանքները կատարելու համար տրվում է 50 րոպե ժամանակ:
16. Քաղաքացին ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր առաջադրանքի վերաբերյալ ամփոփաթերթի համապատասխան վանդակում կատարում է նշում՝ ընտրելով մեկ (իր կարծիքով՝ ճիշտ) պատասխանը:
17. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև թեստավորման առաջադրանքների կատարման համար հատկացված ժամանակն սպառվելուց հետո քաղաքացին թեստը և ամփոփաթերթը հանձնում է Հանձնաժողովին, դուրս գալիս սենյակից:
18. Հանձնաժողովը ստուգում է առաջադրանքները, հաշվարկում հավաքած միավորների քանակը, արդյունքների վերաբերյալ կազմում արձանագրություն, որը հաստատվում է Հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:
19. Թեստում յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում ոչ միայն ոչ ճիշտ պատասխանի նշումը, այլև մեկից ավելի պատասխաններ նշելը, որևէ պատասխան չնշելը:
20. Ստուգման աշխատանքներն ավարտելուց հետո քաղաքացին հրավիրվում է թեստավորման սենյակ, որից հետո Հանձնաժողովի նախագահը հայտարարում է նրա հավաքած միավորները:
21. Թեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել Հանձնաժողովին՝ հրապարակումից հետո երեսուն րոպեի ընթացքում, ինչպես նաև՝ վերադասության կարգով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարին:
22. Բողոքարկումը թեստի որևէ հարցադրման կամ դրա ենթադրյալ պատասխանի ճշտության, ինչպես նաև թեստավորման արդյունքում քաղաքացու հավաքած միավորները հաշվելիս թույլ տրված հնարավոր սխալի վիճարկումն է:

23. Եթե Հանձնաժողովը պարզում է, որ քաղաքացու բողոքը թեստավորման արդյունքների հաշվարկման ժամանակ թույլ տրված հավանական սխալի վերաբերյալ հիմնավորված է, ապա Հանձնաժողովը բավարարում է քաղաքացու պահանջը՝ կատարելով թեստավորման արդյունքների ճիշտ հաշվարկ:
24. Բողոքարկման արդյունքներն ամփոփելուց անմիջապես հետո, ինչպես նաև բողոք չլինելու դեպքում՝ բողոքարկման համար նախատեսված ժամանակի ավարտից հետո, նույն օրը Հանձնաժողովը թեստավորման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն և ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարին:
25. Հանձնաժողովի արձանագրության հիման վրա ՀՀ կրթության և գիտության նախարարը կայացնում է որոշում՝ քաղաքացուն հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող տեղեկանք տրամադրելու մասին, եթե թեստավորման արդյունքում քաղաքացին հավաքել է առնվազն 27 միավոր:
26. Մինչև 27 միավոր ստանալու դեպքում քաղաքացուն հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող տեղեկանքի տրամադրումը մերժվում է:
27. Քաղաքացուն հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող տեղեկանքը կամ դրա տրամադրման մասին մերժումը տրվում է՝ դիմումը ներկայացնելու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:
28. Ստուգման արդյունքները եռօրյա ժամկետում կարող են բողոքարկվել դատարան:
29. Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի՝ հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքը ստուգելու քննության անցկացման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը: